



ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ  
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




|                                                 |    |
|-------------------------------------------------|----|
| 1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....           | 1  |
| 2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ .....                    | 2  |
| 3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ .....                        | 4  |
| 3.1. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման ..... | 6  |
| 3.2. Ծախսերը՝ ըստ ծրագրերի .....                | 9  |
| 4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ .....                     | 11 |
| ԱՄՓՈՓՈՒՄ .....                                  | 12 |

## 1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով առաջնահերթ և գերակա են համարվում մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը միտված ծրագրերը: Ծրագրային նշված ուղղությունների հիմքը Երևան քաղաքի՝ մի կողմից 2019-2023թթ. զարգացման հնգամյա ծրագրով սահմանված գերակայություններն են, մյուս կողմից՝ 2022թ. ծրագրի առաջնահերթությունները: Ընդ որում, նույն տրամաբանությամբ նախագծվել էին 2019-2021թթ. բյուջեները, և այս իմաստով 2022թ. բյուջեի կազմման մոտեցումներում փոփոխություն չի նախատեսվել:

Հայտնի է, որ 2020-ին ՀՀ-ում գրանցված տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները շարունակում են պահպանվել նաև ներկայումս, և այս առումով Երևան քաղաքի 2022թ. բյուջեն ևս որոշակիորեն կրում է այդ հետևանքների ազդեցությունները: Այսպես, թեև 2021-ի համեմատ 2022թ. բյուջեով նախատեսվում է ապահովել 2.2 մլրդ դրամով ավելի եկամուտ՝ 94.6 մլրդ դրամի չափով, վերջինս 12.5 մլրդ դրամով զիջում է 2020թ. բյուջեով նախատեսված ցուցանիշին: Բյուջեի ծախսերը 2021թ. նախատեսվածից ցածր կլինեն շուրջ 2.0 մլրդ դրամի չափով, իսկ 2020թ. ցուցանիշից՝ 17.5 մլրդ դրամով: Արդյունքում 2022թ. բյուջեի պակասուրդը կձևավորվի 4.3 մլրդ դրամի մակարդակում, որը նախորդ տարվա ցուցանիշից զգալիորեն փոքր է՝ շուրջ 4.1 մլրդ դրամով:

**Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ**






## 2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2022 թվականի բյուջեով նախատեսված ընդհանուր եկամուտների աճը՝ 2021 թվականի նախատեսվածի համեմատ, ակնկալվում է ապահովել սեփական եկամուտների<sup>1</sup> շարունակական աճի շնորհիվ: Հակառակ դրան՝ 2022-ի բյուջեով ոչ սեփական եկամուտները, ինչպես 2021-ին, կնվազեն: Այսպես՝ 2022 թվականին բյուջեի սեփական եկամուտները գնահատվում են 34.5 մլրդ դրամ, որը 2021-ի համեմատ ավելի է 3.8 մլրդ դրամով կամ 12.5%-ով, իսկ ոչ սեփական եկամուտները գնահատվում են 60.0 մլրդ դրամ, որը 2.8%-ով զիջում է 2021-ի, և 25.1%-ով՝ 2020-ի ծրագրված ցուցանիշին: Արդյունքում, 2022 թվականին սեփական եկամուտների կշիռը կկազմի 36.5%՝ 2021-ի ցուցանիշի համեմատ աճելով 3.3 տոկոսային կետով: Ոչ սեփական եկամուտների կշիռը կանխատեսվում է 63.5% մակարդակում, և պետք է նկատենք, որ վերջինս 2020-ին ծրագրված համապատասխան ցուցանիշից փոքր կլինի 11.3 տոկոսային կետով: Ըստ էության, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի բյուջեի ոչ սեփական եկամուտների հիմնական աղբյուրը ՀՀ պետական բյուջեն է, ստացվում է, որ այս մասով եկամուտները երկրորդ տարին անընդմեջ նվազեցվում են պետական բյուջեից ստացվող հատկացումների հաշվին, ինչն էլ արտացոլում է ՀՀ տնտեսությանը փոխանցված շուկերի՝ դեռևս շարունակվող բացասական էֆեկտը:

### Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները, մլրդ դրամ



Սեփական եկամուտների կազմում **հարկային եկամուտները և տուրքերը** 2022-ին կկազմեն 25.3 մլրդ դրամ՝ 2021թ. բյուջեով նախատեսվածի համեմատ աճելով 14.0%-ով կամ 3.1 մլրդ դրամով, և բյուջեի ընդհանուր եկամուտների 2.3% աճին նպաստելով 3.4 տոկոսային կետով: Հարկային եկամուտների և տուրքերի

<sup>1</sup> Բյուջեի սեփական եկամուտներին են դասվում՝ «Հարկեր և տուրքերը», ինչպես նաև բյուջեի «Այլ եկամուտներ» հոդվածով սահմանված շահաբաժինները, գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական գանձումները, տույժերից և տուգանքներից մուտքերը և այլ եկամուտները:

14.0% աճից 12.7 տոկոսային կետը նախատեսվում է ապահովել անշարժ գույքից ստացվող գույքահարկի 43.5% աճի, իսկ 1.5 տոկոսային կետը՝ փոխադրամիջոցներից ստացվող գույքահարկի 2.7% աճի միջոցով, որոնք կկազմեն համապատասխանաբար 9.3 մլրդ. և 12.4 մլրդ. դրամ: Տեղական տուրքերը 2021թ. ծրագրված ցուցանիշին կզիջեն 1.0%-ով և կկազմեն 3.2 մլրդ. դրամ՝ ընդհանուր հարկային եկամուտների և տուրքերի աճին ունենալով 0.1 տոկոսային կետով բացասական նպաստում:

Երևան քաղաքի 2022թ. բյուջեով նախատեսվում է ստանալ 22.4 մլրդ. դրամի չափով **պաշտոնական դրամաշնորհներ**, ինչը 12.7%-ով զիջում է 2021-ին, և 6.5%-ով՝ 2020-ին ծրագրված դրամաշնորհների ծավալը: Սպասվող դրամաշնորհների 89.2%-ը կամ 20.0 մլրդ. դրամը բաժին կհասնի ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներին, որոնք 2021-ի համեմատ կնվազեն 8.6%-ով: Վերջինիս կազմում 13.4 մլրդ. դրամը ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներն են (այնքան, որքան նախատեսվել էր 2020-2021 թվականներին), իսկ 6.6 մլրդ. դրամը՝ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող հատկացումները (սուբվենցիաները): Նշված սուբվենցիաները նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ցածր են 1.9 մլրդ. դրամով կամ 22.2%-ով, և կնպաստեն պաշտոնական դրամաշնորհների 12.7% կրճատմանը շուրջ 7.3 տոկոսային կետով: Միջազգային կազմակերպություններից ստացվող ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհները ևս կնվազեն՝ շուրջ 42.3%-ով կամ 1.0 մլրդ. դրամի չափով՝ ընդհանուր դրամաշնորհների կրճատմանը նպաստելով 3.7 տոկոսային կետով:

Կառավարման այլ մակարդակներից ստացվող կապիտալ ներքին դրամաշնորհների և միջազգային կազմակերպություններից ստացվող կապիտալ արտաքին դրամաշնորհների ծավալները 2022-ին ևս նախատեսվել է 2021-ի համեմատ ավելի քիչ ծավալներով՝ համապատասխանաբար 0.4 մլրդ. և 0.7 մլրդ. դրամ (նվազեցումները՝ 30.8% և 25.8%): Վերջիններս ընդհանուր դրամաշնորհների կրճատմանը կնպաստեն համապատասխանաբար 0.7 և 1.0 տոկոսային կետով: Կապիտալ դրամաշնորհների կրճատումը բավական մտահոգիչ է, քանի որ դրանք ուղղվում են առկա քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը կամ նորերի կառուցմանը: Ընդ որում, կապիտալ արտաքին դրամաշնորհները կրճատվել էին նաև 2021թ. բյուջեի ծրագրով, և այս բացասական երևույթը կրում է շարունակական բնույթ:

Ընդհանուր եկամուտների կազմում 2022 թվականին ամենամեծ տեսակարար կշիռը կշարունակեն ունենալ բյուջեի **այլ եկամուտները** (49.5%)՝ կազմելով 46.8 մլրդ. դրամ՝ 2021թ. ծրագրված ցուցանիշը գերազանցելով 2.3 մլրդ. դրամով կամ


5.1%-ով: Սակայն նկատենք, որ 2021-ին այլ եկամուտների ծրագրված ցուցանիշը (44.5 մլրդ դրամ) նախորդ տարվա համեմատ նախատեսվել էր 31.3%-ով կամ 20.2 մլրդ դրամով պակաս: Արդյունքում, թեև 2022-ին այլ եկամուտների կշիռը 2021-ի համեմատ նախատեսվում է բարելավվել 1.4 տոկոսային կետով, վերջինս զգալիորեն ցածր կլինի 2020թ. ծրագրված ընդհանուր եկամուտների 60.4%-ից: Բյուջեի այլ եկամուտների աճը առավելապես (շուրջ 3.5 տոկոսային կետով) պայմանավորված կլինի ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացվող համայնքային եկամուտների 4.3% աճով: Սրանք հիմնականում ՀՀ կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար Երևան քաղաքին տրամադրվող գումարներն են: Ընդ որում, այդ գումարները 2021-ի բյուջեով նախորդ տարվա համեմատ նվազեցվել էին 35.8%-ով, այսինքն՝ 2022-ի բյուջեով ՀՀ կառավարության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար Երևան քաղաքին կտրամադրվի 2020-ին նախատեսվածից շուրջ 18.5 մլրդ դրամով պակաս գումար:

### 3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով նախատեսվել է իրականացնել 98.8 մլրդ դրամի ծախս, որը 2021թ. բյուջեով նախատեսված ծավալից պակաս է 2.0 մլրդ դրամով կամ 1.9%-ով: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ կնվազեցվեն ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերը<sup>2</sup>՝ կազմելով համապատասխանաբար 88.0 մլրդ և 10.8 մլրդ դրամ: Մասնավորապես, ընդհանուր ծախսերի 1.9% կրճատմանը 0.6 տոկոսային կետով կնպաստի ընթացիկ ծախսերի 0.7% կրճատումը, իսկ կապիտալ ծախսերը կկրճատվեն շուրջ 1.4 մլրդ դրամի չափով կամ 11.1%-ով՝ ընդհանուր ծախսերի նվազեցմանը նպաստելով 1.3 տոկոսային կետով: Արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքը կվատթարանա. ընթացիկ ծախսերի կշիռը կկազմի 89.1%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 10.9% (2021-ի ծրագրված ցուցանիշից ցածր շուրջ 1.1 տոկոսային կետով):

<sup>2</sup> Կապիտալ ծախսերը հաշվարկված են որպես ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի («+» նշանով) և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի («-» նշանով) հանրագումար:

### Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ



Կապիտալ ծախսերի կրճատումը լրացուցիչ մտահոգությունների առիթ է տալիս, քանի որ վերջինիս կազմում 2021թ. համեմատ 4.6%-ով նվազեցվել են քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղվող ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կազմում են 15.7 մլրդ դրամ): Հայտնի է, որ նախորդ տարիներին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը շարունակաբար և զգալիորեն թերակատարվել են: Օրինակ, Երևան քաղաքի բյուջեի ճշտված պլանով ոչ ֆինանսական ակտիվների գծով 2018-ին նախատեսվել է իրականացնել 10.2 մլրդ դրամի չափով ծախս, սակայն վերջինս փաստացի թերակատարվել է 62.3%-ով կամ 6.2 մլրդ դրամի չափով, 2019-ին նախատեսված 15.6 մլրդ դրամից չի կատարվել շուրջ 8.2 մլրդ դրամը (թերակատարումը՝ 52.4%), իսկ 2020-ին նախատեսված 22.7 մլրդ դրամից փաստացի շեղումը կազմել է 13.6 մլրդ դրամ կամ 59.9%: Հատկանշական է, որ հատկապես այս թերակատարումների հետևանքով՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2018 և 2020 թվականներին փաստացի եղել են ավելին, քան ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն են: Արդյունքում, կապիտալ ծախսերի փաստացի ցուցանիշը նշված տարիներին եղել է բացասական՝ համապատասխանաբար -0.6 մլրդ և -2.2 մլրդ դրամ:

2022-ի բյուջեով 2021-ի համեմատ ընթացիկ ծախսերի նվազեցմանն ամենամեծ նպաստումը (1.8 տոկոսային կետ) կունենա սոցիալական նպաստների և կենսաթոշակների ֆոնդի 69.6% կրճատումը, որը կկազմի մոտ 0.7 մլրդ դրամ՝ զիջելով նաև 2020-ի ծրագրված ցուցանիշին շուրջ 0.2 մլրդ դրամի չափով: 2021 թվականին նշված ուղղությամբ նախատեսվել էր իրականացնել 2.3 մլրդ դրամի ծախս: Ընթացիկ ծախսերի կրճատմանը կնպաստեն նաև «Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» և «Այլ ծախսեր» հոդվածներով կատարվող ծախսերի՝ համապատասխանաբար 7.3% և 0.9% կրճատումները (նպաստումները՝ համապատասխանաբար 1.0 և 0.2 տոկոսային կետ):


Ընթացիկ ծախսերի կրճատմանը 1.4 տոկոսային կետով կհակազդի աշխատանքի վարձատրությանն ուղղվող ֆոնդի (10.8 մլրդ դրամ)՝ նախորդ տարվա համեմատ 13.3% աճը: Ընդ որում, նախատեսվում է աշխատավարձերի և հավելավճարների ֆոնդն ավելացնել 24.7%-ով կամ 2.1 մլրդ դրամով (ընթացիկ ծախսերի կրճատմանը կհակազդի 2.4 տոկոսային կետով), իսկ պարգևատրումների ֆոնդը կրճատել շուրջ 80.7%-ով կամ 0.8 մլրդ դրամով, որն ընթացիկ ծախսերի նվազեցմանը կնպաստի 0.9 տոկոսային կետով: Արդյունքում աշխատավարձերի ֆոնդը կկազմի 10.6 մլրդ դրամ, իսկ պարգևատրումների ֆոնդը՝ 0.2 մլրդ դրամ: Նշենք, որ աշխատանքի վարձատրության ընդհանուր ֆոնդը 2020թ. փաստացի ցուցանիշի համեմատ կաճի մոտ 2.1 մլրդ դրամով կամ 23.7%-ով, 2019-ի համեմատ՝ 3.0 մլրդ դրամով կամ 37.8%-ով, իսկ 2018-ի համեմատ՝ 4.8 մլրդ դրամով կամ 81.3%-ով: Ընդ որում, թեև 2020 և 2021 թվականների համեմատ 2022-ին նախատեսվում է կրճատել հաստիքների քանակը (համապատասխանաբար 111-ով և 112-ով), այնուամենայնիվ այն բարձր կլինի 2018 և 2019 թվականների ցուցանիշներից 23-ով: Այսինքն՝ աշխատանքի վարձատրության ֆոնդի աճը կշարունակի պայմանավորված լինել ինչպես հաստիքների քանակի ավելացմամբ (2018 և 2019 թվականների համեմատ), այնպես էլ վարչական ապարատի ղեկավար կազմի աշխատավարձերի բարձրացմամբ:

### 3.1. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Ըստ գործառնական դասակարգման ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը 2022թ. կունենան **կրթության ոլորտին** ուղղվող ծախսերը (35.2%), որոնց ծավալը կկազմի մոտ 34.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.3%-ով, և ընդհանուր ծախսերի կրճատմանը հակազդելով 1.4 տոկոսային կետով: Աճը հիմնականում պայմանավորված կլինի նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերի աճով, որոնց ծավալը 2022-ին կավելանա 6.2%-ով՝ կազմելով 18.3 մլրդ դրամ: Վերջինս գլխավորապես ուղղվելու է նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման աշխատանքներին: Միջնակարգ կրթությանն ուղղվող ծախսերը կնվազեն 5.3%-ով՝ կազմելով 8.7 մլրդ դրամ:



#### Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ



**Տնտեսական ծառայություններին** ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի կառուցվածքում 2022-ին նախորդ տարվա համեմատ կնվազի 3.3 տոկոսային կետով և կկազմի 32.2%՝ իր կշռով զիջելով միայն կրթության ոլորտին ուղղվող ծախսերին: Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը կկազմեն 31.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 11.1%-ով և ընդհանուր ծախսերի նվազմանը նպաստելով 3.9 տոկոսային կետով: Ընդ որում, տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը կնվազեն 3.4%-ով՝ կազմելով 17.8 մլրդ դրամ, իսկ շրջակա միջավայրին ուղղվող ծախսերը՝ 19.1%-ով՝ կազմելով 14.1 մլրդ դրամ:

**Տնտեսական հարաբերություններին** ուղղվող ծախսերի կրճատումը հիմնականում պայմանավորված կլինի ճանապարհային տրանսպորտային համակարգին ուղղվող ծախսերի՝ նախորդ տարվա համեմատ 27.2%-ով կամ 3.6 մլրդ դրամի չափով նվազեցմամբ, որը կկազմի 9.5 մլրդ դրամ: Մտահոգիչ է, որ ճանապարհատրանսպորտային համակարգին ուղղվող ծախսերը բարձրացվել էին թե՛ 2020, թե՛ 2021 թվականներին, սակայն այս համակարգի խնդիրները մինչ այժմ չարունակում են մնալ արդիական: Պատճառը, թերևս, ծախսերի զգալի թերակատարումներն են: Մասնավորապես, 2020 թվականի բյուջեի հաստատված պլանով այս ուղղությամբ նախատեսվել էր իրականացնել 11.7 մլրդ դրամի չափով ծախս, որը բյուջեի ճշտված ծրագրով վերանայվել է դեպի ներքև և կազմել 9.2 մլրդ դրամ, իսկ փաստացի կատարվել է ընդամենը 5.8 մլրդ դրամի չափով: 2021 թվականի առաջին ինն ամիսների դրությամբ ճանապարհատրանսպորտային համակարգին ուղղված ծախսերը կազմել են 6.0 մլրդ դրամ՝ բյուջեի հաստատված պլանի 13.1 մլրդ դրամի և ճշտված պլանի 22.0 մլրդ դրամի համեմատ, ինչը 2021-ի տերեվերջին ակնհայտորեն կրկին կհանգեցնի ծախսերի էական թերակատարման: Ուստի, ճանապարհատրանսպորտային ծախսերի նվազեցումն

ուղեկցվում է վերջին շրջանում այս ուղղությամբ նախատեսված ծախսերի չափազանց ցածր կատարողականով:

*Շրջակա միջավայրի* պաշտպանությանն ուղղվող ծախսերի կազմում գերակշիռ մաս են զբաղեցնում աղբահանման ծառայություններին ուղղվող ծախսերը, որոնց ծավալը 2022-ին նախորդ տարվա համեմատ նախատեսվում է նվազեցնել 28.1%-ով կամ 3.0 մլրդ դրամով, ինչի արդյունքում այն կկազմի 7.5 մլրդ դրամ: Հատկանշական է, որ նույնիսկ այդ պարագայում աղբահանությանն ուղղվող ծախսերը կշարունակեն բարձր մնալ անգամ 2018թ. փաստացի կատարված 5.8 մլրդ դրամի չափով ծախսերի ծավալից:

**Սոցիալական ծառայություններին** ուղղվող ծախսերը 2022 թվականին 2021-ի համեմատ կաճեն 2.9%-ով և կկազմեն 15.4 մլրդ դրամ՝ 0.4 տոկոսային կետով հակազդելով ընդհանուր ծախսերի կրճատմանը: Ընդ որում, *բնակարանային շինարարությանն ու կոմունալ ծառայություններին* ուղղվող ծախսերը կաճեն 6.0%-ով և կկազմեն 8.4 մլրդ դրամ՝ 3.2 տոկոսային կետով նպաստելով սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի 2.9% աճին: Վերջինս հիմնականում պայմանավորված կլինի փողոցների լուսավորմանը հատկացվող գումարների 9.9% ավելացմամբ, թեև դրանք նախորդ տարի նվազեցվել էին 22.2%-ով, և արդյունքում փողոցների լուսավորման համար նախատեսված ծախսերի մակարդակը չի գերազանցի 2020-ի հատկացումների չափը:

Սոցիալական ծառայությունների կազմում՝ *առողջապահության ոլորտին* ուղղվող ծախսերը ևս կաճեն՝ նախորդ տարվա համեմատ մոտ 292.2 մլն դրամով՝ շուրջ 2.0 տոկոսային կետով նպաստելով ոլորտի ընդհանուր ծախսերի աճին: Աճը հիմնականում պայմանավորված կլինի Երևան քաղաքի ենթակայության տակ գտնվող առողջապահական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներին ուղղվող ծախսերի աճով: *Սոցիալական պաշտպանությանն* ուղղվող ծախսերը զգալիորեն կկրճատվեն՝ շուրջ 472.3 մլն դրամով՝ 3.2 տոկոսային կետով հակազդելով ոլորտի ընդհանուր ծախսերի աճին: «Հանգիստ, մշակույթ և կրոն» հոդվածով նախատեսված ծախսերը ևս կաճեն՝ շուրջ 3.4%-ով և կկազմեն 4.4 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված մշակութային ծառայությունների համար նախատեսված ծախսերի 3.8% աճով:

**Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին** ուղղվող ծախսերի ծավալը 2022թ. բյուջեով ևս նախորդ տարվա համեմատ նախատեսվում է ավելացնել՝ շուրջ 21.5%-ով կամ 2.0 մլրդ դրամով, ինչի արդյունքում այն կկազմի 11.2 մլրդ դրամ: Վերջինս բյուջեի ընդհանուր ծախսերի կրճատմանը կհակազդի շուրջ 2.0 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված «օրենսդիր և

գործադիր մարմիններ, պետական կառավարում» հոդվածով նախատեսված ծախսերի ավելացմամբ, որոնք կկազմեն շուրջ 10.5 մլրդ դրամ:

### 3.2. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի ծախսերի՝ ըստ իրականացվող ծրագրերի, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես 2021 թվականի, այնպես էլ 2022-ի բյուջեով նախատեսված են քաղաքային զարգացմանն ուղղված մի շարք կարևոր ծրագրերի ֆինանսավորման մասով նվազեցումներ: Միաժամանակ, շարունակվելու են շոշափելի ծավալներով իրականացվել այնպիսի ծրագրեր, որոնց նպատակահարմարությունն այնքան էլ արդարացված չէ ներկա պայմաններում, և դրանց իրականացումը կարող է կրել կոռուպցիոն ռիսկեր՝ խորացնելով բյուջեի սուղ միջոցների ցածր արդյունավետությամբ օգտագործման վտանգը:

Մասնավորապես՝ 2021-ի համեմատ 2022-ին «Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ու «Ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգում» ծրագրերով հատկացումները կրճատվել են 542.7 մլն դրամով: «Փողոցների պահպանում և շահագործում» և «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում» ծրագրերով հատկացվող գումարները նվազեցվել են համապատասխանաբար 128.1 մլն և 38.4 մլն դրամով: «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում» ծրագրով 2021-ի համեմատ նախատեսվել են՝ 23.7 մլն դրամով, իսկ «Եզրաքարերի վերանորոգում» ծրագրով՝ 12.6 մլն դրամով ավելի քիչ միջոցներ:

«Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում» ծրագրով տրամադրվող հատկացումները, թեև 2021-ի համեմատ 15.9 մլն դրամի չափով ավելի են նախատեսվել՝ դրանք զիջում են 2020թ. համապատասխան ցուցանիշին շուրջ 250.0 մլն դրամով: Ընդ որում, 2021թ. բյուջեի ուղերձում նշվում էր, որ ծրագրով նախատեսված գումարի նվազեցումը պայմանավորված է ոռոգման ցանցի պահպանման աշխատանքները կանաչ գոտիների պահպանման ծրագրում ներառելու հանգամանքով: Սակայն, «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագրով նախատեսված գումարները 2021-ին ևս նվազեցվել էին (2.5%-ով), իսկ 2022-ին դրանք պահպանվում են 2021-ի մակարդակում:

«Վերելակների հիմնանորոգում» ծրագրով նախատեսված ծախսերը 2022-ին չեն աճի՝ պահպանվելով 2021-ի մակարդակում՝ շուրջ 1.1 մլրդ դրամի շրջանակներում, այնինչ 2020 թվականի ճշտված բյուջեով այս ծրագրով նախատեսվել էր մոտ 5.2 մլրդ դրամի չափով ծախս, իսկ վերելակների արդիականացման հիմնախնդիրը շարունակվում է առաջնային մնալ մինչ օրս:

Փոխարենը՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպություններին նախատեսվում է հատկացնել 420.3 մլն դրամ՝ Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով: Նշենք նաև, որ «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» նոր ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել 77.5 մլն դրամի չափով ծախս: Ծրագիրը կազմվել է տարբեր սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով, սակայն 2022թ. բյուջեի ուղերձում նշված ծրագրի վերաբերյալ այլ մանրամասներ չեն ներկայացվում:

«Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն» ծրագրով նախատեսվում է հատկացնել 90.0 մլն դրամ, իսկ «Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ» ծրագրով՝ 44.4 մլն դրամ, սակայն վերջինիս պարագայում բացարձակապես չի նշվում, թե ինչ հատակագծի մասին է խոսքը, իսկ գումարը փոխանցվելու է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ որպես սուբսիդիա (նույն գումարի չափով և նույն տրամաբանությամբ՝ ինչպես 2021թ. բյուջեի պարագայում):

Նշենք նաև, որ «Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն» ծրագրով նախատեսվել է 15.0 մլն դրամ, «Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ» ծրագրով՝ 10.5 մլն դրամ, իսկ «Ինքնակամ կառույցների քանդում» ծրագրով՝ 25.0 մլն դրամ:

«Ներդրումային ծրագրերի իրականացում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել նույնչափ, որքան նախորդ տարի՝ 133.0 մլն դրամ, սակայն ինչպես 2021-ի, այնպես էլ 2022-ի բյուջեի ուղերձում չի նշվում, թե ինչ ներդրումային ծրագրերի մասին է խոսքը: Ընդ որում, նշված գումարից 5.0 մլն դրամը նախատեսվում է պարզապես ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար: Մյուս կողմից՝ շուրջ 13.0 մլն դրամն ուղղվելու է դրամաշնորհային ծրագրերի, մրցույթների հայտերի լրացմանը, ինչպես նաև ներդրումային և սուբվենցիոն ծրագրերի կազմման նպատակով մասնագետների ներգրավմանը, շնորհանդեսների, ֆիլմերի և այլ նյութերի պատրաստմանը:


«Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում» ծրագրի շրջանակներում նախատեսվել է

հատկացնել 136.2 մլն դրամի չափով գումար՝ 47.2 մլն դրամով ավելի, քան հատկացվել է նախորդ տարի: Մտահոգիչն այն է, որ բյուջեի ուղերձում պարզապես նշվում է գումարները՝ տեղական սոցիալական ծրագրերի իրականացմանը, տոնական և հիշատակի օրերին ընտանիքների համար միջոցառումների կազմակերպմանը և այլ թիրախային սոցիալական ծրագրերի իրականացմանն ուղղելու մասին, սակայն, չի մանրամասնվում, թե առավել կոնկրետ ինչ միջոցառումների մասին է խոսքը: Հատկանշական է, որ 2021-ի բյուջեով նշվում էր ծրագրով նախատեսված 89.0 մլն դրամի մի մասը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքի կարիքի գնահատման շրջանակում փնայցերի համար ճանապարհային ծախսերի փոխհատուցմանն ուղղելու մասին:

#### 4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2022 թվականին Երևան քաղաքի բյուջեի պակասուրդը կկազմի 4.3 մլրդ դրամ՝ պայմանավորված եկամուտների համեմատ ավելի մեծ չափով ծախսեր նախատեսելու հանգամանքով: Պակասուրդի սպասվող մակարդակը նկատելիորեն զիջում է 2021թ. բյուջեով նախատեսված 8.4 մլրդ դրամ ցուցանիշը՝ պայմանավորված մի կողմից ծախսերի կրճատմամբ, մյուս կողմից՝ եկամուտների համեմատաբար ավելի բարձր մակարդակի կանխատեսմամբ: 2022-ին պակասուրդի ֆինանսավորման հիմնական աղբյուր կհանդիսանա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, որն այլ ֆինանսական ակտիվների հետ միասին կապահովի պակասուրդի ֆինանսավորման 65.1%-ը (2.8 մլրդ դրամ): Մնացած 34.9%-ը (1.5 մլրդ դրամ) նախատեսվում է ապահովել վարկերի հաշվին:

**Գծապատկեր 5. Երևան քաղաքի բյուջեի պակասուրդը, մլրդ դրամ**



Նշենք նաև, որ չնայած Երևան քաղաքի բյուջեի՝ 2018-2020թթ. նախագծերով և ճշտված ծրագրերով նախատեսվում էր ձևավորել պակասուրդային բյուջե, այդուհանդերձ՝ 3 տարի անընդմեջ եկամուտների համեմատ ծախսերի (հատկապես՝ կապիտալ) զգալի թերակատարման արդյունքում Երևան քաղաքի



բյուջեն եղել է հավելուրդային: Ընդ որում, 2021թ. առաջին ինն ամիսների դրությամբ բյուջեն ևս հավելուրդային է, և հավանաբար տարեվերջին կմնա այդպիսին՝ հակառակ պլանավորվածի, քանի որ բյուջեի ծախսերը շարունակում են եկամուտների համեմատ թերակատարվել շատ ավելի մեծ չափով: Բյուջեի անարդյունավետ կառավարման վարքագծի և նման ցածր կատարողական ցուցանիշների պահպանման պարագայում 2022-ին ևս չի բացառվում տարին ամփոփել հավելուրդային բյուջեով:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով Երևան քաղաքի 2022թ. բյուջեի վերաբերյալ վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ երկրորդ տարին շարունակ բյուջեն իր վրա է կրում 2020թ. տնտեսական ճգնաժամի հետևանքները, որոնք իրենց արտահայտությունն են գտել ինչպես բյուջեի եկամուտների, այնպես էլ ծախսերի ծրագրված ցուցանիշներում:

Այսպես, թեև 2022 թվականին բյուջեի սեփական միջոցներից ձևավորվող եկամուտները կանխատեսվում են 2021-ի համեմատ մի փոքր՝ 3.8 մլրդ դրամով ավելի, այնուամենայնիվ բյուջեի ոչ սեփական միջոցներից ստացվող եկամուտները 2021 և 2020 թվականների համեմատ կանխատեսվում են ավելի քիչ (համապատասխանաբար՝ 2.8%-ով և 25.1%-ով)՝ պայմանավորված ՀՀ պետական բյուջեից փոխանցվող գումարների և արտաքին աղբյուրներից ստացվող եկամուտների նվազեցմամբ:

Բյուջեի ծախսերում 2022 թվականին 2021-ի համեմատ սպասվում են կրճատումներ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի գծով: Հատկապես մտահոգիչ է կապիտալ ծախսերի կազմում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի սպասվող նվազեցումը, ինչը նշանակում է, որ քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցման համար նախատեսվել են ավելի քիչ չափով գումարներ: Ընդ որում, 2018-2020թթ. նշված ուղղությամբ ծախսերը պլանավորվել էին համեմատաբար մեծ ծավալներով, սակայն դրանք զգալիորեն թերակատարվել են (մոտ 50-60%): Ստացվում է, որ բարձր արդյունավետությամբ, ժամանակին և ամբողջական ծավալով ծախսերի կատարման անընդունակությունը քաղաքային իշխանություններին թույլ չի տալիս առաջիկայում նախատեսել ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի ընդլայնում և իրագործում:

2021 թվականին 10.9%-ով աշխատավարձի ֆոնդի նվազեցումից հետո 2022 թվականին վերջինս կաճի 13.3%-ով՝ 2020 թվականի փաստացի ցուցանիշը գերազանցելով 23.7%-ով: Ընդ որում, աշխատավարձի ֆոնդը 2019 և 2018

թվականների փաստացի ցուցանիշների համեմատ ևս կշարունակի պահպանվել բավական բարձր մակարդակում (ապահովելով համապատասխանաբար 37.8% և 81.3% աճ)՝ հակառակ քաղաքային իշխանությունների՝ վարչական ապարատի օպտիմալացման խոստումների: Ըստ 2022թ. բյուջեի՝ հաստիքների քանակը նշված տարիների համեմատ կշարունակի պահպանվել բարձր մակարդակում: Հատկանշական է, որ աշխատավարձերի ֆոնդի աճին կնպաստի հիմնականում համայնքի ղեկավար կազմի աշխատավարձերի բարձրացումը:

Ճանապարհատրանսպորտային համակարգի բարելավմանն ուղղված ծախսերը 2021 թվականի համեմատ 2022-ին կնվազեցվեն 27.2%-ով, թեև տրանսպորտային համակարգի խնդիրները շարունակում են մնալ առանցքային և դեռևս չլուծված: Ընդ որում, մտահոգիչ է, որ 2020-2021 թվականներին այս ուղղությամբ նախատեսված ծախսերը կտրուկ աճել էին, սակայն խնդիրն այդպես էլ չի ստացել համակարգային լուծում՝ ծախսերի զգալի թերակատարումների հետևանքով: Աղբահանության ծառայություններին ուղղվող ծախսերը 2021-ի համեմատ սպասվող տարում ևս նախատեսվում է կրճատել (շուրջ 3.0 մլրդ դրամով), սակայն աղբահանության ծառայությունները Երևան քաղաքի համար կշարունակեն մնալ շատ ավելի թանկ, քան 2018-ին էր (շուրջ 29.3%-ով)՝ ինչը ներկայիս քաղաքային իշխանությունների ոլորտային քաղաքականության հետևանքն է:

Մտահոգիչ է նաև, որ քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանն ու բարելավմանն ուղղված ծախսերի կրճատումների (ինչպիսիք, օրինակ՝ ճանապարհատրանսպորտային համակարգին ուղղվող ծախսերն են, ինչպես նաև ճանապարհային ծածկերի, եզրաքարերի, կամրջային կառուցվածքների կառուցման ու վերանորոգման և այլ նմանատիպ ծրագրերով նախատեսված ծախսերը) հետ միաժամանակ՝ քաղաքային իշխանությունների կողմից շոշափելի ծավալներով շարունակում են նախատեսվել այնպիսի խնդրահարույց ծախսեր, որոնք կոռուպցիոն ռիսկեր են պարունակում և դրանց նպատակայնության տեսանկյունից՝ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Այդպիսի ծախսերի շարքին են դասվում չպարզաբանվող ներդրումային ծրագրերի համար պարզապես տեղեկատվական բնույթի նյութերի տպագրության և տեսաֆիլմերի պատրաստման ծախսերը, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին հատկացումները և տարբեր հասարակական կազմակերպություններին անդամակցելու համար ծախսերը:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**